

«Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրով տրամադրվող վարկ»					
Վարկի նպատակը	Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգում (էԱ վերանորոգման օբյեկտ է հանդիսանում ՀՀ տարածքում գտնվող բազմաբնակարան շենքի բնակարանը կամ անհատական բնակելի տունը՝ բացառությամբ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող)				
Շահառու	ՀՀ-ում սեփականության իրավունք ունեցող ՀՀ քաղաքացի				
Վարկառու/համավարկառու/երաշխավոր	<ul style="list-style-type: none"> <li>18-70 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, ովքեր ծրագրի իրականացման կարգն ուժի մեջ մտնելուց հետո իրենց բնակարանի (բնակելի տան) էներգաարդյունավետ վերանորոգման համար ֆինանսական կառույցներից ներգրավել են վարկային միջոցներ և վերջինիս ընտանիքի անդամները: (Ընտանիքի անդամ՝ Շահառուի ընտանիքի անդամ հանդիսացող անձինք, որոնք սույն կարգի իմաստով համարվում են Շահառուի հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները),</li> <li>Վարկի սպասարկման ընթացքում վարկառուի/համավարկառուի 70 տարեկանը լրանալու դեպքում եթե վարկի մայր գումարի 70% մարված է, ապա հայտը մերժման ենթակա չէ:</li> </ul>				
Տրամադրման ռեսուրս	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 50%; text-align: center;">«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»</td> <td style="width: 50%; text-align: center;">Բանկի ներքին ռեսուրսներով</td> </tr> </table>	«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»	Բանկի ներքին ռեսուրսներով		
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»	Բանկի ներքին ռեսուրսներով				
Վարկի գումար	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 20%; text-align: center;">բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգում</td> <td style="width: 80%; text-align: center;">300,001-7,000,000</td> </tr> <tr> <td style="text-align: center;">անհատական բնակելի տների վերանորոգում</td> <td style="text-align: center;">300,001-10,000,000</td> </tr> </table>	բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգում	300,001-7,000,000	անհատական բնակելի տների վերանորոգում	300,001-10,000,000
բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգում	300,001-7,000,000				
անհատական բնակելի տների վերանորոգում	300,001-10,000,000				
Վարկի արժույթ	ՀՀ դրամ				
Վարկի ժամկետ	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 50%; text-align: center;">60-84 ամիս</td> <td style="width: 50%; text-align: center;">36-84 ամիս</td> </tr> </table>	60-84 ամիս	36-84 ամիս		
60-84 ամիս	36-84 ամիս				
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 50%; text-align: center;">14%</td> <td style="width: 50%; text-align: center;">15%</td> </tr> </table>	14%	15%		
14%	15%				
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք	14,94%-16,15% (հաշվի չի առնվել տոկոսների սուբսիդավորման դրույքաչափը)				
Տոկոսադրույքի սուբսիդավորում	<ul style="list-style-type: none"> <li>- 14%, եթե վերանորոգվող գույքը գտնվում է սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում,</li> <li>- 12%, եթե վերանորոգվող գույքը գտնվում է սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում,</li> <li>- 11%, եթե վերանորոգվող գույքը գտնվում է սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում,</li> <li>- 9%, եթե վերանորոգվող գույքը գտնվում է Երևան քաղաքում: Բնակավայրերի ցանկը հավելված 1-ում</li> </ul>				

<b>Ապահովման միջոց</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Մինչև 1,000,000 ՀՀ դրամի դեպքում առանց երաշխավորության, 1,000,001- 5,000,000 ՀՀ դրամի դեպքում 1 երաշխավոր,</li> <li>• 1,000,001-3,000,000 ՀՀ դրամ՝ առանց երաշխավորության , միայն էներգաարդյունավետ ապրանքների ձեռքբերման դեպքում, եթե OTI** գործակիցը մինչև 45% է, 5,000,001-7,000,000 ՀՀ դրամ կազմող վարկերի դեպքում եթե OTI** գործակիցը մինչև 45% է, անհրաժեշտ է 1 երաշխավոր*:</li> </ul>		
	<ul style="list-style-type: none"> <li>• 5,000,001-10,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում, որպես վարկի ապահովման միջոց պետք է հանդիսանա վերանորոգվող անշարժ գույքը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• 5,000,001-10,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում անհրաժեշտ է 2 երաշխավոր, որոնց զուտ եկամուտը 350,000 ՀՀ դրամից բարձր է, եթե OTI**≤45% և վարկի գումարը 5,000,001-7,000,000 ՀՀ դրամ է, ապա 1 երաշխավոր</li> </ul>	
	<p>Բոլոր այն դեպքերում երբ հաճախորդը չի ցանկանա ներկայացնել երաշխավոր, կարող է գրավադրվել վերանորոգվող անշարժ գույքը:</p>		
<p>Գրավի առարկային գնահատումը իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից</p>			
<b>Վարկ/գրավ հարաբերակցություն</b>	Մինչև 70%		
<b>Վարկի տրամադրման եղանակ</b>	Անկանխիկ՝ միանվագ կամ փուլային		
<b>Մարման եղանակ</b>	Անուփոփոխային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/		
<b>Ապահովագրություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ անշարժ գույքի ապահովագրություն</li> <li>• Դժբախտ պատահարներից ապահովագրությունը պարտադիր պայման է: ! Ապահովագրությունն իրականացվում է վարկի մնացորդի չափով հոգուտ Բանկի Վարկի գործողության ողջ ընթացքում Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահանված սակագներով</li> <li>• Բանկի ներքին ռեսուրսներով վարկավորման դեպքում ապահովագրություն չի կատարվում</li> </ul>		
<b>Եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (ԸՊԵ կամ OTI)</b>	<b>Մինչև 5,000,000 ՀՀ դրամ վարկերի համար</b>	մինչև 60%	
	<b>5,000,000-10,000,000 ՀՀ դրամ վարկերի համար</b>	մինչև 45%	մինչև 60%
<b>Ժամկետանց մայր գումարի տույժ</b>	0,1% օրական		
<b>Ժամկետանց տոկոսագումարի տույժ</b>	0,13% օրական		

<b>Վարկի տրամադրման միջնորդավճար</b>	Առկա չէ
<b>Վարկի սպասարկման ամսական վճար</b>	Առկա չէ
<b>Վարկի վաղաժամկետ մարման տույժ</b>	Առկա չէ
<b>Վարկառուի/համավարկառուի/երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վերջին 12 ամսում(գործող և մարված) վարկերի ժամկետանց օրերի թիվը չպետք է գերազանցի 30 օրը :</li> <li>• Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող:</li> <li>• Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող:</li> </ul> <p>* Եթե վարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամը, ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում:</p>
<b>Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով</b>	<ul style="list-style-type: none"> <li>- սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,</li> <li>- իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000 – 52,000 ՀՀ դրամ,</li> <li>- նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ,</li> <li>- գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:</li> </ul> <p>Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույթաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:</p>

\*Երաշխավորը պետք է ունենա զուտ եկամուտ 350,000 ՀՀ դրամից բարձր:

\*\* տվյալ դեպքում հիմք է ընդունվում փաստաթղթավորված զուտ եկամուտը

! Սույն պայմաններով չկարգավորվող դեպքերը կարգավորվում են ՀՀ կառավարության 19.04.2022թ-ի թիվ 520-Լ և 30.05.2022թ-ի թիվ 775-Լ որոշումներով:

**Այլ պայմաններ**

1. *Էներգասարդյունավետ կհամարվի այն վերանորոգումը, որի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների ընդհանուր արժեքից էներգասարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրների, օգտագործվող էներգասարդյունավետ շինարարական նյութերի, էներգախնայող ջեռուցման համակարգերի, արտաքին դռների և պատուհանների ձեռքբերմանը, տեղադրմանը կամ փոխարինմանը, իսկ անհատական բնակելի տան դեպքում՝ նաև արտաքին պատող և պարփակող կոնստրուկցիաների ջերմամեկուսացմանն է ուղղվում՝*

ա. *Բնակարանների համար՝ առնվազն 20%-ը;*

բ. *Բնակելի տների համար՝ առնվազն 30%-ը:*

գ. *ԱՀ վերաֆինանսավորմամբ վարկերի տրամադրման դեպքում՝ առնվազն 30%-ը:*

Մեկ բնակարանի (բնակելի տան) համար ծրագրի շրջանակներում իրականացվում է միայն մեկ վարկի տրոստադրույքի սուբսիդավորում:

2. *Էներգասարդյունավետության չափանիշներ.*

- Պատերի, տանիքների, միջհարկային ծածկերի ջրամեկուսացում,
- Էներգասարդյունավետ շինարարական նյութերի ձեռքբերում,

- Արտաքին դռների և պատուհանների ձեռքբերում, փոխարինում կամ տեղադրում,
- Զեռուցման կամ ջրատարաբացուցիչ կաթսայի (գազի կամ էլեկտրականության հիմքով) և ջեռուցման համակարգի բաղադրիչների (խողովակներ, սեկցիաներ և այլն) ձեռքբերում, փոխարինում կամ տեղադրում,
- Հովացման համակարգերի, էներգաարդյունավետ օդափոխիչի, օդորակիչի ձեռքբերում և տեղադրում
- Արևային համակարգերի (ջրատարաբացուցիչ, ֆոտովոլտային) ձեռքբերում և տեղադրում,
- Լուսադիոդային լամպերի և լուսատուների ձեռքբերում:

Էներգաարդյունավետ միջոցառումներին ներկայացվող տեխնիկական բնութագրերը սահմանվում են պայմանագրով:

3. Վարկի ընդհանուր գումարի ոչ ավելի, քան 10%-ը կարող է ուղղվել կենցաղային տեխնիկայի (առնվազն էներգախնայողության A+ դասի սառնարան, լվացքի մեքենա, սպասք լվացող մեքենա, էլեկտրական ջեռոց, էլեկտրական սալօջախ, էլեկտրական ջրատարաբացուցիչ) ձեռքբերմանը:

4. Սուբսիդավորման գումարի տրամադրման վաղաժամկետ դադարեցման հիմքերը.

- Վարկի ամբողջական մարման դեպքում
- Վարկատուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման դեպքում
- Վարկատուի կողմից կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում
- Բնակարանի/բնակելի տան վերանորոգման աշխատանքները վարկի տրամադրումից առավելագույնը 12 ամիս հետո ավարտված չլինելու դեպքում,
- Վարկի գործողության ընթացքում Վարկատուի կողմից կատարվող ամսական վճարումների շրջանակներում 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում,
- Վարկատուի կողմից Ծրագրի շրջանակներում մեկից ավելի անգամ օգտվելու նպատակով այլ Կազմակերպությունից վարկ ստանալու դեպքում:
- Այլ հիմքեր համաձայն Ծրագրի իրականացման կարգի

5. Վարկի ծախսային ուղղությունները և դրանց ներկայացվող պահանջները՝

Վարկի օգտագործումը թույլատրելի ծախսային ուղղություններով իրականացվում է անկանխիկ եղանակով՝ վարկի ընդհանուր գումարի առնվազն 70%-ի չափով: Վարկի ծախսային ուղղությունների առնվազն 80%-ը և էներգաարդյունավետ միջոցառումներին ուղղվող ծախսերի 100%-ը պետք է հիմնավորվեն վճարումը հավաստող փաստաթղթերով (վճարման հանձնարարական, ՀԴՄ կտրոն, հաշիվ-ապրանքագրերով վճարում, բանկային կամ քարտային փոխանցում, ապրանքի կամ աշխատանքի կամ ծառայության ընդունման-հանձնման փաստը հավաստող փաստաթուղթ (փոխադարձ ակտ, արձանագրություն և այլն): Էներգաարդյունավետ այն միջոցառումները, որոնց համար չեն ներկայացվում վճարումը հավաստող փաստաթղթեր, ծրագրի իմաստով չեն դիտարկվում որպես էներգաարդյունավետ միջոցառումներ:

- Մինչև 2010 թվականը կառուցված բնակարանի (բնակելի տան) համար անհրաժեշտ է տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն (ոչ ավելի, քան 10 տարվա վաղեմության)՝ 4-րդ աստիճանի վնասվածություն չունենալու վերաբերյալ (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց ցանկը հրապարակված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական կայքէջում՝ [www.minurban.am](http://www.minurban.am)) կամ գնահատողի որակավորման գործող վկայական ունեցող և լիազոր մարմնի կողմից հաշվառված անձի կողմից տրված գնահատման հաշվետվություն, որը ներառում է գնահատվող գույքի տեխնիկական վիճակի (վնասվածության աստիճանի) վերաբերյալ տեղեկատվություն:

- Վերանորոգման/կահավորման աշխատանքների նախահաշիվը լրացվում է հետևյալ հղմամբ [վերանորոգում \(nmc.am\)](http://nmc.am)և պեղք է ունենա դրական հաստատում:

## Ծանոթություն

*! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:*

1. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
2. Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:
3. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.
  - Վարկային հայտի համապատասխանությունը սույն փաստաթղթով և «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության» ծրագրով սահմանված պահանջներին,
4. Վարկի մերժման գործոններն են.
  - Վարկառուի և երաշխավորի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով և «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության» ծրագրով սահմանված պահանջներին:
5. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում 3 աշխատանքային օրվա ընթացքում և տրամադրում՝ մինչև 4-7 աշխատանքային օր:
6. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:
9. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:
10. Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:
11. Երաշխավորն իրավունք ունի.

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:

- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

- Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող ծառայությունների սակագների:

12. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am) , ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

13. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏԿՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ [www.fastbank.am](http://www.fastbank.am) :

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՈՒՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

### **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ**